ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքականության կրթաթոշակներ ծրագիր 2017

Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանը (ԲՀՀՀ) աշխատում է Հայաստանում սեփական քաղաքացիների առջև պատասխանատու, ժողովրդավար, հաշվետու կառավարություն ունենալու և կենսունակ ու հանդուրժող հանրություն կառուցելու ուղղությամբ: ԲՀՀՀ-ի ուշադրության կենտրոնում են մարդու իրավունքների, կառավարման թափանցիկության, արդարադատության հասանելիության, քաղաքացիական հասարակության սատարման և սոցիալական ներառման հարցերը:
Բաց և բազմակարծիք հանրության մարտահրավերներին արագ արձագանքելու, ինչպես նաև իրավասու և ուժեղ քաղաքացիական հասարակություն ձևավորելու միտումով՝ ԲՀՀՀ հայտարարում է անհատական դրամաշնորհների մրցույթ 2017թ. քաղաքականության կրթաթոշակներ (policy fellowship) ծրագրի շրջանակում: Ծրագիրն ուղղված է աջակցելու այն հետազոտողներին, ովքեր պատրաստակամ են իրականացնել ուսումնասիրություններ՝ բացահայտելու բաց հասարակության առջև ծառացած առավել վճռորոշ մարտահրավերները, մշակելու կիրառական լուծումներ, և գործուն քայլեր ձեռնարկել ուսումնասիրությունը լսելի դարձնելու ուղղությամբ՝ այսպիսով առավելագույնի հասցնելով ուսումնասիրության ազդեցությունը: Կրթաթոշակը նպատակ ունի զարգացնել հետազոտողների՝ հանրային քաղաքականության հետազոտության միջոցով հանրային կյանքի տարբեր ոլորտների գործընթացների վրա ազդելու կարողությունները, նպաստել անհատ հետազոտողների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և պետական մարմինների միջև ակտիվ և առավել որակյալ համագործակցային մշակույթի ձևավորմանը՝ զանգացնելով հանրային քաղաքականության հետազոտության և վերլուծության վրա հիմնված երկխոսությունը:

Ով կարող է դիմել

Ծրագիրը բաց է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, համալսարանների դասախոսների, հանրային քաղաքականության ոլորտի հետազոտողների, վերլուծաբանների, փորձագետների և խորհրդատուների համար: Անհրաժեշտ է ունենալ նվազագույնը մագիստրոսական կրթություն հանրային կառավարման, քաղաքականության, քաղաքագիտության կամ սոցիալական այլ գիտությունների՝ իրավագիտության, տնտեսագիտության, միջազգային հարաբերությունների կամ համանման բնագավառներում: Հանրային քաղաքականության վերլուծության, ինչպես նաև շահերի պաշտպանություն իրականացնելու փորձի առկայությունը ցանկալի է, հետազոտական աշխատանքների համար անհրաժեշտ գրավոր հմտությունների առկայությունը՝ խիստ գերադասելի: Դիմորդները պարտավոր են էական/անհրաժեշտ ժամանակ հատկացնել առավելագույնը հինգ ամիս տևող նախագծերի իրականացմանը: Դիմում-հայտերը ընդունվում են միայն անհատների կողմից:

Ակնկալվող արդյունքներ

Դիմորդներից ակնկալվում է Հայաստանի առջև ծառացած մարտահրավերների[1] շրջանակում կոնկրետ խնդիրների բացահայտում և ձևակերպում, քաղաքականության հետազոտության իրականացում և հանրային դիսկուրսի խթանում՝ հանրային կյանքի տարբեր ոլորտների քաղաքականության խնդիրները/մտահոգությունները լսելի դարձնելով և դրանց համար լուծումներ առաջարկելով:

Կրթաթոշակառուներից ակնկալվում է փաստարկների վրա հիմնված խնդիրների և բարեփոխումների հարցադրումներ ձևակերպել՝ կիրառել համապատասխան մեթոդաբանական գործիքներ և հետազոտության վրա հիմնված ապացույցներով եզրակացություններ ձևակերպել: Կրթաթոշակառուները պետք է ներկայացնեն կառուցվածքային հաշվետվություն՝ քաղաքականության վերլուծության (10,000 բառի սահմաններում) և հակիրճ առաջարկություններով քաղաքականության վերլուծության համառոտագիր (policy brief):

Հանրային դիսկուրսի խթանումը կարևորվում է որոշումների կայացման գործընթացների վրա արդյունավետ ազդեցություն ունենալով: Կրթաթոշակառուներից ակնկալվում է ժամանակի տրամադրում՝ իրենց հետազոտությունը ճանաչելի դարձնելու նպատակով:

Ցանկալի է, որ կրթաթոշակառուները կազմեն և հետևեն քաղաքականության խնդիրը/մտահոգությունը ճանաչելի դարձնելու ռազմավարություն, որը կներառի հանդիպումներ և քննարկումներ համապատասխան ոլորտի պատասխանատուների, որոշում կայացնողների, խմբերի և դաշնակիցների հետ, հանրային քննարկումների նախաձեռնում և մասնակցություն, հանրային հաղորդակցման տարբեր ձևաչափերում նեգրավում՝ տվյալ քաղաքականության խնդրի վերաբերյալ տեղեկացված լինելու միտումով:

Դիմում-հայտերի ընթացակարգ

Դիմորդները պետք է լրացնեն իրենց կողմից առաջարկվող ծրագրի ներկայացման և գնահատման համար նախատեսված ՔԿՆ 2017 դիմում-հայտի ձևը:[2] Բոլոր դիմորդները կտեղեկացվեն մրցույթի արդյունքների մասին՝ հայտը ներկայացնելու վերջնաժամկետից վեց շաբաթվա ընթացքում: Առաջին փուլը անցած դիմորդները կհրավիրվեն հարցազրույցի:

Բյուջե

Կրթաթոշակառուները կստանան անհատական դրամաշնորհներ մինչեւ $3,000 (ԱՄՆ դոլար) հետազոտության վերաբերյալ ծախսերը հոգալու նպատակով:

[1] Դիմորդները խրախուսվում են ձևակերպել խնդիրներ՝ հիմնվելով, բայց չսահմանափակվելով, Հավելված 1-ում (էջ 4) առաջարկվող ՔԿՆ 2017 թեմաների և խնդիրների շուրջ:

[2] Դիմում-հայտի ձևը տե՛ս Հավելված 2-ում (էջ 7)

Դասընթացներ

Նախաձեռնության շրջանակներում ԲՀՀՀ-ը նաև աջակցում է կրթաթոշակառուների քաղաքականության վերլուծության կարողությունների զարգացմանը: Բոլոր կրթաթոշակառուները պետք է մասնակցեն ԲՀՀՀ-ի կողմից կազմակերպվող սեմինարին՝ քաղաքականության վերլուծության կարևորության, խնդիրների և մեթոդաբանության ձևակերպման, ինչպես նաև քաղաքականության որոշումների փոփոխության և խնդիրները ճանաչելի դարձնելու հաջողակ փորձերի վերաբերյալ: Մրցույթի հիման վրա և տվյալ հետազոտվող քաղաքականության պահանջների համաձայն՝ ԲՀՀՀ-ը նաև հնարավորություն է տալիս կրթաթոշակառուներին մասնակցելու տարածաշրջանային հանդիպման (ներառյալ մասնակիցներ Մոլդովայից, Ղազախստանից և Ղրղզստանից), որը կազմակերպվում է Բուդապեշտի Կենտրոնական Եվրոպական Համալսարանի Հանրային քաղաքականության կենտրոնի կողմից:

Կրթաթոշակառուներից ակնկալվում է ակտիվ մասնակցություն և իրենց փորձառության ներդնում ԲՀՀՀ-ի և այլ քաղհասարակության կազմակերպությունների կողմից պարբերաբար կազմակերպվող քաղաքականության քննարկումներին և հանդիպումներին:

Դիմումների ներկայացում

Հետաքրքրված անձիք պետք է ներկայացնեն իրենց հետազոտության առաջարկների դիմում-հայտերը (տես կից հավելված 2-ը), ռեզյումե և նախորդ հետազոտական աշխատանքի նմուշ, կամ հղում/ հետևյալ էլ.հասցեին register@osi.am մինչև ս.թ.

Հոկտեմբերի 25-ը, ժամը 17.00

Դիմումների էլեկտրոնային տեսքով ներկայացումը պարտադիր է: Դիմումը մեզ ուղարկելուց հետո, մինչև երկու աշխատանքային օրերի ընթացքում դիմորդները կստանան հաստատող նամակ դիմումի ստացման վերաբերյալ, իսկ այն չստանալու դեպքում, խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ:

Դիմումների տպած օրինակները նույնպես ընդունվում են (ցանկության դեպքում)՝ Թումանյան 7/1, 2-րդ փակուղի հասցեով: Հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել *Քաղաքականության կրթաթոշակներ* ծրագրի պատասխանատու Վալենտինա Գևորգյանին՝ հեռ. 53-38-62, 53-67-58 կամ էլ.հասցե՝ valentina@osi.am

Մրցույթի հետ կապված հարցերի պարզաբանմանը նվիրված հանդիպումը տեղի կունենա ս.թ. հոկտեմբերի 12–ին, ժամը 17.00, Գոլդեն Թուլիփ հյուրանոցի Վիվալդի սրահում, հասցե՝ Աբովյան 14:

Հավելված I Հետազոտման առաջարկվող թեմատիկ բնագավառներ

Քաղաքականության կրթաթոշակներ ծրագիր 2017

Դատաիրավական համակարգի հաշվետվողականություն

Անկախ, անկողմնակալ և հանրության առջև հաշվետու դատաիրավական համակարգը սահմանադրական իրավունքների պաշտպանության կարևորագույն երաշխիքն է: Ժողովրդավարական հասարակությունում դատաիրավական համակարգի արդյունավետ աշխատանքն արտացոլում է տվյալ երկրի իրավունքի գերակայությունը պահպանելու պատրաստակամությունը: Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության կառավարման համակարգն այժմ ենթարկվում է արմատական փոփոխությունների, անհրաժեշտ է որոշում կայացնողների ուշադրությունը կենտրոնացնել տվյալ ոլորտի բարեփոխումների պատշաճ որակն ապահովելու խնդրի վրա: Դիմորդները կարող են ներկայացնել հետազոտական հայտ, որով կվերհանվեն դատաիրավական համակարգում, այդ թվում՝ դատական և արտադատական մարմինների (օրինակ՝ Արդարադատության խորհուրդ, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու դիմումները քննող Անկախ հանձնաժողով) աշխատանքում քաղաքականության բացերը: Հետազոտությունները կարող են նաև ուղղված լինել խոշտանգումներից զերծ մնալու, ազատության, արդար դատաքննութան, սեփականության և այլ իրավունքների պաշտպանության ուղղությամբ ձեռնարկված քաղաքականության փոփոխություններին, որոնք բխում են Հայաստանի Հանրապետության դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճիռներից:

Կառավարման հաշվետվողականություն և կոռուպցիայի կանխարգելում

Կոռուպցիայի խնդիրները արդյունավետ հասցեագրելու նպատակով Հայաստանը պետք է արդյունավետ իրականացնի տարբեր ոլորտներում ստանձնած հակակոռուպցիոն պարտավորություններ: Կոռուպցիան վերացնելու անհաջող ջանքերը նվազեցնում են պետական կառույցների գործունեության արդյունավետությունը և ստեղծում են խոչընդոտներ արդյունավետ կառավարման առաջխաղացման համար: Այս համատեքստում դիմորդները կարող են ուսումնասիրել կառավարության կողմից իրականացվող միջազգային վարկային և դրամաշնորհային ծրագրերի արդյունավետությունը և բարեվարքությունը, ինչպես նաև մշակել մեխանիզմներ՝ բարձրացնելու ծրագրերի ծախսերի նկատմամբ կառավարության պատասխանատվությունը: Դիմորդները նաև կարող են գնահատել հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների պլանի իրականացումը, մշակել գնահատման չափորոշիչներ առողջապահության, ոստիկանության, պետական եկամուտների հավաքագրման ոլորտներում/ ոլորտների որոշակի ասպեկտներում: Դիմորդները նույնպես կարող են վերլուծել երկրի առաջընթացը՝ GRECO, GSP+, UNCAC-ի շրջանակներում ստանձնած հակակոռուպցիոն հիմնական պարտավորությունների և միջազգային կոնվենցիաների իրականացման ուղղությամբ: Հետազոտության առանձին առարկա կարող են հանդիսանալ նաև կոռուպցիայի դեմ պայքարին կոչված քաղաքականությունների գործառնության վերլուծություններ, ներառյալ՝ ապօրինի հարստացման քրեականացումը, շահերի բախման դեմ պայքարի կարգավորումները, իրական սեփականատերերի, և այլ ոլորտների օրենսդրական լուծումները:

Ընտանեկան բռնություն եւ խտրականություն

Փոքրամասնությունների և խոցելի խմբերի պաշտպանությունն ապահովելու համար Հայաստանը պետք է մի շարք իրավական կարգավորումներ ընդունի: Օրենսդրական փոփոխությունների ջատագովության հանրային աջակցության միջոցներ մշակելու համար դիմորդները խրախուսվում են զարգացնել կրթության, առողջապահության, զբաղվածության, փակ հաստատությունների և այլ ոլորտներում խտրական գործելակերպի վերաբերյալ հետազոտություններ, փոքրամասնությունների և խոցելի խմբերի համար հավասար հնարավորությունների և ոչ խտրական վերաբերմունքի ապահովմանն

ուղղված պետական քաղաքականության վերլուծություն, կանանց բռնությունից պաշտպանելու, ինչպես նաև հակա-խտրականության իրավունքը խթանելու և պաշտպանելու պետական քաղաքականության կիրառման և վերահսկման արդյունավետ և անկախ մեխանիզմների ուսումնասիրություններ: Լրացուցիչ առաջարկվող հետազոտական ոլորտները ներառում են խտրականության և ընտանեկան բռնության դեպքերի քննության և դատավարության պրակտիկան, Հայաստանում թիրախային խմբերի համար հատուկ միջոցառումների (կառուղոցական գործողությունների) անհրաժեշտությունը և նման միջոցների ազդեցությունը հավասար իրավունքների և հնարավորությունների երաշխիքների ապահովման տեսանկյունից: Դիմորդները կարող են նաև ուսումնասիրել փոքրամասնությունների և մարգինալացված խմբերի նկատմամբ կարծրատիպային պատմույթներն ու վերաբերմունքը, դրանց պատճառները և ազդեցությունը մարդու իրավունքների պաշտպանվածության վրա:

Հանրակրթություն և բարձրագույն կրթություն

Կրթությունը մարդկային շարունակական զարգացման հիմքն է: Այսօրվա Հայաստանի կրթական համակարգը ուշադրության արժանի խնդիրներ ունի: Չնայած կրթության բարելավմանն ուղղված գործողությունների և դոնորների նշանակալի աջակցության՝ բարեվարքության, արդարության, որակի խնդիրները շարունակում են կրթական համակարգի մաս կազմել: Հետևաբար, առկա կրթական մի շարք քաղաքականություններ և ծրագրեր վերլուծության և հետազոտության վրա հիմնված ապացույցների կարիք ունեն: Դիմորդները կարող են հետազոտություններ ներկայացնել, բայց չսահմանափակվել, կրթական ոլորտին առնչվող հետևյալ թեմաներով՝ սոցիալական արդարություն, ներգրավվածություն և խտրականություն, ակադեմիական բարեվարքություն և ազատություն, քաղաքային և գյուղական համայնքներում դպրոցական կրթություն, ավագ դպրոցների արդյունավետություն, հանրակրթությունից՝ բարձրագույն կրթություն անցումային շրջանի խնդիրներ, հանրակրթական դասագրքեր, ծնողների և այլ խորհուրդների դերը դասընթացի կազմակերպման գործում, գիտական որակավորման գործընթաց, գերազանցության և համեմատական մեթոդները և հանրակրթության բնագավառի ցուցանիշներ, անվճար կրթության քաղաքականություն և պրակտիկա, քաղաքացիական կրթություն և մասնագիտական կողմնորոշում, ինքնակազմակերում և մոբիլիզացում (կրթական հարցերի շուրջ), կրթության որակի և արժեքի նկատմամբ հանրային ընկալումներ, հանրակրթության օպտիմալացում՝ համայնքների խոշորացման համատեքստում, ինչպես նաև անվտանգության ռազմավարություն և դրա արտացոլումը կրթական համակարգում:

Ապատեղեկատվություն և քարոզչություն

Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները (ՏՀՏ) նպաստել են քաղաքացիական հասարակության խմբերի մի շարք կարողությունների զանգացմանը, այդ թվում՝ ինքնակազմակերպվելուն, մարդու իրավունքների պաշտպանության և բարեփոխումներն առաջ տանելու լայն հնարավորությունների ստեղծմանը: Միևնույն ժամանակ, տարբեր ավտորիտար կառավարությունների կողմից ՏՀՏ-ը օգտագործվում են իրենց իսկ հասարակություններում սահմանափակող գաղափարախոսություններ պարտադրելու նպատակով: Հայաստանում, չնայած մի քանի անկախ լրատվամիջոցների առկայությանը՝ ազգայնական, ռազմատենչ և խտրական նարատիվների տարածումը նպաստում է քաղաքացիական քննարկումների սահմանափակմանը: Նման միտումները ավելի մեծ ուշադրություն են պահանջում քաղաքականություն մշակող համայնքից, առաջնահերթ դարձնելով ապացույցների վրա հիմնված հետազոտությունների դերը՝ ի տարբերություն քարոզչական դիսկուրսի: Տեղական և օտար քարոզչության մեջ թաքնված տեղեկատվության մանիպուլյացիայի դեմ պայքարելու նպատակով դիմորդները կարող են մշակել հետազոտություններ՝ ուղղված քարոզչության մեխանիզմների միջոցով հանրային ոլորտ ներթափանցելու միտումներին: Դիմորդները նաև, կարող են փաստեր բացահայտել պատմական ռևիզիոնիստական պրակտիկաների ուսումնասիրման համար՝ նպատակ ունենալով խթանել քննադատական և ռեֆլեքսիվ մտածողությունը՝ անընդհատ կրկնվող նարատիվների նկատմամբ:

Քաղաքացիական հասարակության մասնակցությունը հանրային քաղաքականության մեջ

Հանրային կյանքի տարբեր ոլորտների քաղաքականության և դրանցում որոշումների կայացման գործընթացներում քաղհասարակության մասնակցության մակարդակը՝ հաջողակ և առողջ հասարակության ապացուցված ցուցանիշ է: Հանրային քաղաքականության մեջ հասարակության մասնակցության աճը մեծացնում է կառավարության պատասխանատվության աստիճանը: Հանրային քաղաքականության մշակումը պետք է լինի բազմակողմ գործընթաց, մասնավորապես այն պետք է ներառի հասարակության տարբեր խմբեր, ինչը կբարձրացնի այդ քաղաքականության իրականացման գործընթացի վերահսկողության հնարավորությունները: Արդյունավետ և բազմակողմանի որոշումների կայացման մեխանիզմների ստեղծման ճանապարհին Հայաստանի փորձը բարելավելու համար՝ ողջունելի են հանրության իմաստալի մասնակցության խոչընդոտ հանդիսացող՝ թաքնված և ակնհայտ գործոնների բահայտման հետազոտություններ: Դիմորդները կարող են կառավարության հաշվետվողականության, պատասխանատվության և թափանցիկության գնահատման հետազոտություններ մշակել՝ դիտարկելով քաղհասարակության մասնակցությունը կառավարությանն առընթեր տարբեր մարմիններում/խորհուրդներում, գնահատել ինքնակազմակերպվող խմբերի և ցանցերի միջև համագործակցությունը՝ համախմբված մասնակցության մեխանիզմներ մշակելու համար, ինչպես նաև իրավական երաշխիքների զարգացման, դրանց ճանաչելի դարձնելու, և արդյունավետ իրականացմանն ուղղված հետազոտություններ:

Միգրացիա և ինտեգրում

Հայաստանի միգրացիոն դինամիկան պատմականորեն եղել է բավականին բարդ, այսօր էլ մնում է այդպիսին: Այն վերջերս բնութագրվում է կայուն արտագաղթով, Եվրասիական տնտեսական միության համատեքստում դեպի Ռուսաստան սեզոնային միգրացիայով, ինչպես նաև հակամարտությունից փախչող սիրիահայերի ներհոսքով: Միգրացիայի մասին հանրային դիսկուրսում գերիշխում են արտագաղթի և բնակչության կրճատման վերաբերյալ մտահոգությունները: Առաջին հայացքից միգրացիայի քաղաքականությունը պայմանավորված է ԵՄ ֆինանսավորմամբ և վիզաների ազատականացման խոստումներով, այլ ոչ թե միգրանտների և նրանց ընտանիքների կարիքներով: Եթե դիտարկենք միգրացիայի և ինտեգրման քաղաքականությունը որպես կառավարության հաշվետվողականության և քաղաքացիների և ոչ-քաղաքացիների իրավունքների երաշխիքների իրականացման շրջանակ, ապա այս ոլորտում հաշվետվողականության պակասը նշանակում է, որ միգրանտները օտար երկրներում մնում են շահագործման և բռնության վտանգի տակ, իսկ իրենց ընտանիքները՝ սահմանափակ սոցիալական երաշխիքների ներքո: Դիմորդները կարող են անդրադառնալ, բայց չսահմանափակվել հետևյալ թեմաներին՝ միգրացիայի բալանսավորված քաղաքականություն, որն արձագանքում է միգրանտների և նրանց ընտանիքների կարիքներին, միգրացիայի և տեղահանման մասին մտահոգություններին՝ դրանք համահունչ դարձնելու արտերկրում աշխատող քաղաքացիների ավելի լավ պաշտպանվածության ապահովմանը և նոր միգրանտների ինտեգրմանը նպաստելու անհրաժեշտության ուղիներն և մեխանիզմները: Բացի այդ, դիմորդները նաև կարող են դիտարկել թե արդյոք միգրացիոն հարցերի վերաբերյալ դիսկուրսում արտացոլվում են միգրացիայի իրական դինամիկայի հոսքերն ու դրանց ազդեցությունը այս ոլորտին առնչվող քաղաքականության մշակման մեջ:

Հավելված 2 Դիմումի ձև

Քաղաքականության կրթաթոշակներ ծրագիր 2017

Դիմումի նպատակն է հեշտացնել հետազոտական առաջարկների ընդունման գործընթացը և մատնանշել բոլոր այն հիմնական հարցերը, որոնց անհրաժեշտ է պատասխանել: Նշված բառային սահմանափակումները նախատեսվել են ոչ թե որպես խիստ սահմանափակումներ, այլ որպես հետազոտական առաջարկի մշակման գործընթացը հեշտացնող չափանիշներ, որոնք ակնկալվում է պահպանել: Առաջարկներում խրախուսվում են պարզությունը, հստակությունը, և ոչ-ծավալուն հետազոտական հարցերի ներկայացումը:

Նախագծի վերնագիր և համառոտ բնութագիր

Առաջարկի համառոտ բնութագիր՝ ի՞նչ եք ուզում ուսումնասիրել, ի՞նչն է Ձեզ դրդել նման հետազոտության իրականացման, որքանո՞վ է Ձեր առաջարկած թեման արդիական և կապված ներկայումս ընթացող որևէ բարեփոխման հետ, ի՞նչ հարցերի եք ձգտում պատասխանել, և որո՞նք են այն նախնական այլընտրանքները, որոնք դուք հիմնավորելու եք Ձեր հետազոտության մեջ: (250-300 բառ)

Խնդրի նկարագրություն և հետազոտության հիմնավորում

Համառոտ նկարագրեք Ձեր առաջարկած ոլորտում տիրող իրավիճակը, գոյություն ունեցող հետազոտությունները, քաղաքականությունները՝ մատնանշելով Ձեր նախագծի նախատեսվող հավելումն ու նորարարությունը ոլորտում: Ինչպիսի՞ ազդեցություն ունի խնդիրը այսօր Հայաստանի հանրության համար: Ովքե՞ր են ուղղակիորեն եւ անուղղակիորեն ներգրավված շահագրգիռ կողմերը, ինչպես նաև խնդրի վրա ազդող գործոններն ու թիրախները: Ներկայացրեք խնդրի բնույթն ու համատեքստը, ինչպես նաև Ձեր ուսումնասիրության արդյունքում ակնկալվող ներդրումը՝ խնդրի լուծման վերաբերյալ: (1000-1200 բառ)

Հետազոտական հարց/եր

Ներկայացրեք Ձեր գլխավոր և ենթա-հետազոտական հարցերը: Ի՞նչ հարցերի եք փորձում պատասխանել Ձեր հետազոտության օգնությամբ: (80-100 բառ)

Քաղաքականությանն առաջարկվող այլընտրանք/ներ և նախնական հիմնավորում

Ի պատասխան Ձեր հետազոտական հարցերի, ո՞րն է Ձեր նախընտրած, առաջարկած քաղաքականությունը: Ըստ նախնական հիմնավորման ինչո՞ւ եք կարծում, որ այն ավելի արդյունավետ կլինի: (350-400 բառ)

Մեթոդաբանություն

Հստակ նկարագրեք հետազոտության մեթոդաբանությունը: Մատնանշեք հնարավոր դժվարություններն ու դրանք հաղթահարելու նախատեսվող ուղիները: (300-350 բառ)

Արդյունքներ

Նկարագրեք Ձեր հետազոտական արդյունքները, օրինակ՝ քաղաքականության վերլուծության փաստաթղթեր/ամփոփագրեր/համառոտագրեր, պաստառներ, գիտաժողովի նյութեր, տվյալների բազաներ, ուղեցույցներ, տեղեկատվական թերթիկներ, ինֆոգրաֆիկա, պրեզենտացիաներ, քննարկումներ/բանավեճեր, աուդիո/վիդեո նյութեր և այլն: (80-100 բառ)

Հետազոտության արդյունքների տարածման և հետագա կիրառման ռազմավարություն

Բացի հետազոտության արդյունքների ներկայացումից ինչպե՞ս եք պատկերացնում Ձեր հետազոտության արդյունքների ազդեցություն կոնկրետ ոլորտում: Ի՞նչ ռեսուրսներ և գործիքներ պետք է օգտագործեք հետազոտության արդյունքները տարածելու համար: Ներկայացրեք հետազոտության արդյունքների տարածման և հետազոտության ազդեցությունն առավելագույնի հասցնելու ռազմավարությունը: Ի՞նչ ռիսկեր կարող են ծագել տարածման և ռազմավարության իրագործման գործընթացում: (500-700 բառ)

Ժամանակացույց

Նշեք Ձեր նախագծի պլանավորած գործողություններն՝ ըստ դրանց իրականացման ժամանակի: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ նախագիծը պետք է իրականացվի առավելագույնը 5 ամսիսների ընթացքում: Հետազոտության մեկնարկը նախատեսվում է՝ դեկտեմբերի 1, 2017թ:

Բյուջե

Աղյուսակով ներկայացրեք բյուջեի բոլոր ծախսերը, որոնք կարող են ներառել դաշտային հետազոտությունների հետ կապված ծախսեր, հոնորարներ, տրանսպորտային ծախսեր, հաշվետվության հրատարակման, ներկայացման, տարածման և այլ անհրաժեշտ ծախսեր: Առաջարկի բյուջեն չպետք է գերազանցի $3,000 ԱՄՆ դոլարը:

	բյուջետային տող	*չափի միավոր*	*քանակ*	*միավորի արժեք ($)*	*ընդամենը ($)*
1.					
2.					
3.					
4.					
	Ընդամենը				